Վերջին շրջանում արբիտրաժը որպես վեճերի լուծման արդյունավետ եղանակ օգտագործվում է ոչ միայն ավանդաբար ընդունված առևտրային վեճերի քննության և լուծման համար, այլ նաև մի շարք այլ բնագավառներում:

Հատկապես հետաքրքրական է առողջապահական բնագավառում ծագող վեճերը այլընտրանքային եղանակներով լուծելու դինամիկ զարգացման պրակտիկան աշխարհի մի շարք պետություններում:

Բժշկական արբիտրաժը վեճերի լուծման ժամանակակից մեթոդ է, որը ենթադրում է բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ և այդ ծառայություններից օգտվող սուբյեկտների՝ պացիենտների, ինչպես նաև այլ հնարավոր սուբյեկտների մասնակցությամբ վեճի հանձնում անաչառ և չեզոք երրորդ կողմին՝ արբիտրին՝ առանց անհարկի ձգձգումների կամ կողմնակի ծախսերի անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից վեճի արդարացի լուծում ստանալու նպատակով:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բժշկական արբիտրաժը կիրառվում մի շարք իրավահարաբերություններում՝

- բժշկական օգնություն, սպասարկում, միջամտություն և այլ ծառայություններ, այդ թվում՝ հեռաբժշկություն, լաբորատոր ծառայություններ,
- բժշկի գործողությունների կամ անգործության հետևանքով պատճառված վնաս,
- բժշկական օգնության, սպասարկման և միջամտության որակ,
- բժշկական մասնագիտական էթիկայի կանոններ,
- էլեկտրոնային առողջապահական համակարգում գաղտնիություն և առողջապահության բնագավառի տվյալների բազաների վարում,
- պալիատիվ բժշկական օգնություն,
- բժշկական գաղտնիք,
- առողջապահական հաստատություն-բուժաշխատող հարաբերություններ և այլն:

Հատկանշական է, որ որ բժշկական բնագավառում վեճերը հաճախ առաջանում են, կամ առնվազն սրվում են վատ հաղորդակցության պատճառով: Ըստ 2022 թվականի տվյալների՝ Սինգապուրում բժիշկների դեմ յուրաքանչյուր հինգերորդ բողոք պայմանավորված է եղել միսկոմունիկացիայով: Միևնույն ժամանակ, շատ դեպքերում պացիենտը բժշկական ծառայություն մատուցողի դեմ հայց է ներկայացնում ոչ թե փոխհատուցում ստանալու, այլ սխալը պարզելու նպատակով: Այս առումով վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմները՝ ի դեմս արբիտրաժի և հաշտարարության, երաշխավորում են փաստերի բացահայտումն ու կողմերի միջև համագործակցային միջավայրի պահպանությունը:

Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների ժամանակակից զարգացումների մասին այլ տեղեկություններ ստանալու համար հետևե՛ք Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի սոցիալական մեդիա էջերին և կայքի թարմացումներին:

—